Հավելված N 7
2025 թվականի հունվարի 21-ին կնքված
N «ԴՏՊ-1160-11012/ԳՄ-7/25» պայմանագրի

Ծրագրի եռամսյակային հաշվետվություն

Միջոցառման անվանումը՝ «Հաշմանդամություն ունեցող անձանց սոցիալ-վերականգնողական ծառայություններ ցերեկային կենտրոնում»

Համառոտ բովանդակությունը՝ Խնամքի և սոցիալ-վերականգնողական ծառայությունների մատուցում Վարդենիսի տարածաշրջանի համայնքներում ապրող հաշմանդամություն ունեցող անձանց ցերեկային կենտրոնում

Հաշվետու ժամանակաշրջան՝ *2025թ Առաջին եռամսյակ*

| | Իրականացված գործողություններ | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | Ակնկալվող արդյունքները | Գնահատման չափանիշները և հիմնավորող փաստաթղթեր | Փաստացի մատուցած ծառայություններ | Մեկնաբանություն |
| | Տեղեկացվել է շահառուներին ծրագրի վերսկսման մասին:<br>- Բազմամասնագիտական թիմի կողմից կատարվել է շահառուների կարիքների գնահատում, որի հիման վրա կազմվել են անհատական պլաններ:<br>Կազմվել է շահառուների հետ աշխատանքի ժամանակացույց:<br>- Յուրաքանչյուր մասնագետ և խմբակավար կատարել են գրառումներ շահառուների անհատական և խմբակային պարապմունքների մասին և ներկայացնում ամենամյա հաշվետվություն:<br>Ըստ կազմված գրաֆիկի և ժամանակացույցի՝<br>կատարվել են անհատական և խմբակային պարապմունքներ, ժամանցային, բակային, սպորտային խաղեր, միջոցառումներ: | Շահառուները ստացել են սոցիալ- վերական գնողական ծառայություններ:<br>Ծառայությունների և խմբակների պարապմունքների արդյունքում շահառուների մոտ բարելավվել են մտավոր ունակությունները և մասնագիտական հմտությունները: | Բազմամասնագիտակ ան թիմի բոլոր անդամներն ունեն շահառուների հետ կատարվելիք աշխատանքների թեմատիկ պլանավորում և դրանց կատարողականի օրագիր, որտեղ զետեղված են անհատական և խմբային պարապմունքների արդյունքները:<br>Անընդհատ կատարվում են | Տրամադրվել են սոց աշխատողի, հոգեբանի, հատուկ մանկավարժի ծառայություններ:<br>Շահառուները մասնակցել են կարպետագործության, շյուղագործության, գոբելենագործության, փայտամշակման, կար ու ձևի, համակարգչային հմտությունների տիրապետման խմբակների պարապմունքներին և ձեռք են բերել մասնագիտական որոշակի հմտություններ:<br>Շահառուների առողջությանը և | Ծրագիրը շատ կարևոր է և դրական փոփոխություններ են արձանագրվել շահառուների առօրյա կյանքում: Ընտանիքների հավաստմամբ և մեր դիտարկումներով նրանք անկաշկանդ շփվում են շրջապատի մարդկանց հետ, կարողանում են ինքնուրույն զբաղվել ինքնախնամքով, օգնում են տնտեսական գործերում: Շահառուները հաճույքով են այցելում Կենտրոն, որտեղ իրենց ազատ ու անկաշկանդ են զգում, մասնակցում են բոլոր |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | Կիրառվել են դիդակտիկ նյութեր, զարգացողական խաղերի պարագաներ, սպորտային-վերականգնողական մարզաարքեր,խմբակների աշխատանքների կազմակերպման համար սարքավորումներ, աշխատանքային գործիքներ և նյութեր: Շահառուների անվտանգությանը և ինքնազգացողությանը անընդհատ հետևում են պատասխանատուներն ու բուժքույրը: | | համեմատություններ շահառուի սկզբնական և առկա վիճակի միջև: Յուրաքանչյուր աշխատակից ամսվա վերջում հաշվետվություն է ներկայացնում կատարված աշխատանքների և շահառուի մոտ եղած փոփոխությունների մասին: | ինքնազգացողությանը հետևել է բուժքույրը, որը նրանց սովորեցրել է նաև ինքնախնամքի, իր մարմնի և շրջապատի մաքրության, հիգենայի, առողջ սննդի և ապրելակերպի կանոնները: | պարապմունքներին, ձեռք են բերել ընկերներ և հասարակության մեջ ինքնադրսևորման հմտություններ: |
| Ընդամենը շահառուներ՝ 22 | | | | | |
| | | | | | |
| Ազդեցությունը՝ շահառուների մոտ կան նկատելի դրական փոփոխություններ մեծացել է շփման միջավայրը, որտեղ նրանք հանդիպում են տարբեր խառնվածք ունեցող մարդկանց, որոնց հետ կարողանում են չկաշկանդվել, հաղորդակցվել, ընկերանալ: Նրանք արդեն բավականին ակտիվ են, չեն խուսափում հանրային վայրերից: Շահառուները մասնակցելով խմբակների պարապմունքներին ձեռք են բերել իրենց նախասիրություններին համապատասխան մասնագիտական հմտություններ: Զարգացել է ստեղծագործական միտքը և դիզայներական ճաշակը: Կազմակերպվում են շահառուների մասնակցությամբ թեմատիկ միջոցառումներ և մասնակցություն համայնքում անցկացվող հասարակական միջոցառումներին: | | | | | |

*Նախարարություն՝*

*Նախարարության գլխավոր քարտուղար՝*

*Սամվել Մուրադյան*

---------------------------------

*/ստորագրություն/*

*Կ.Տ.*

*Կազմակերպություն՝*

*Նախագահ՝ Մ.Եփրեմյան*

---------------------------------

*/ստորագրություն/*

*Կ.Տ.*